

Օրակարգ

1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկում:
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
3. Ընթացիկ հարցեր :

Գիտխորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 28-ը : ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը նախքան նիստը սկսելը առաջարկեց մեկ բուպե լռությամբ հարգել ԵԼՀ ֆակուլտետի երկու չափազանց ծանր կորուստների՝ Գերմանական բանասիրության ամբիոնի վաստակաշատ վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Յու.Գաբրիելյանի և նրա տիկնոջ՝ նույն ամբիոնի Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Առաքելյանի հիշատակը:

Գ.Բարսեղյանը ասաց, որ այս առումով Գերմանական բանասիրության ամբիոնի առջև ծառայել են բազում հարցեր, բայց ինքը ջանք ու եռանդ չի խնայելու, որպեսզի ամբիոնի ճակատագիրը լինի վստահելի ձեռքերում : Նա հավելեց, որ ամբիոնում կա գիտությունների երեք թեկնածու, բայց ամբիոնը չունի դոցենտ, իսկ օրենքը պահանջում է, որ ամբիոնի վարիչը պետք է գիտությունների թեկնածուի աստիճան և դոցենտի կոչում ունենա: Գ.Բարսեղյանը վստահեցրեց իր գործընկերներին, որ կարճ ժամանակահատվածում կփորձի լուծում գտնել այս առումով :

Անդրադարձ կատարվեց օրակարգի առաջին հարցին՝ դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկմանը: Այս առումով մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆեսոր

Ա.Չուբարյանը ասաց, որ վիճակագրական բոլոր տվյալները կներմուծվեն դեկտեմբեր- հունվար ամիսների ընթացքում:

Անդրադարձան նաև օրակարգի երկրորդ հարցին՝ ասպիրանտների և հայցորդների ատեստավորմանը: Արտասահմանյան գրականության, անգլիական բանասիրության, ռոմանական բանասիրության, թարգմանության տեսության և պրակտիկայի, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոններում ատեստավորման ներկայացվող ասպիրանտների և հայցորդների կատարած աշխատանքները, որի արդյունքում նրանք ատեստավորվեցին: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց նաև իր ամբիոնի երաշխավորությունը ստացած մեկ ձեռնարկը և մեկ մենագրությունը: Նա առաջարկեց իր գործընկերներին, որ ամիսը մեկ անգամ մեկ ասպիրանտ կամ հայցորդ զեկուցեն իրենց կատարած աշխատանքի մասին, որի քննարկումը, անշուշտ, միայն օգուտ կբերի զեկուցողին: Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Շ. Պարոնյանն էլ առաջարկեց, որ կազմակերպվեն ասպիրանտական սեմինարներ, ասպիրանտներն ու հայցորդները տեղյակ լինեն մեկը մյուսի աշխատանքի մասին և քննարկումներ կազմակերպվեն: Դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց այդ նախաձեռնությունը և առաջարկեց հետամուտ լինել և ամիսը մեկ անգամ կազմակերպել նման հանդիպումներ:

Հիմք ընդունելով կատարված աշխատանքը՝ միաձայն **որոշեցին**

- Ատեստավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 2-րդ տարվա ասպիրանտ Անի Արայի Միմոնյանին:
- Ատեստավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 4-րդ տարվա ասպիրանտ Նվարդ Հովհաննեսի Տեր-Մինասյանին:

- Ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 2017 թ. հեռակա ասպիրանտ Մելինե Սահակյանին:
- Ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 2017 թ. հեռակա ասպիրանտ Լուսինե Ադամյանին:
- Ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 2018 թ. հեռակա ասպիրանտ Կատյա Թովմասյանին:
- Ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 2020 թ. հեռակա ասպիրանտ Տաթևիկ Նաջարյանին:
- Ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 2020 թ. հայցորդ Քրիստինե Խաչատրյանի:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Մելինե Ղոնյանին:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Բադայանին :
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Ջեմմա Միլիտոնյանին:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Նելլի Սարգսյանին:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանին:
- Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Նարե Զաբաղյանին:
- Ռոմանական բանասիրության ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ Արփի Գասպարյանին :

Միաձայն **որոշեցին** նաև՝

- Երաշխավորել Արփինե Մադոյանի և Նարինե Մադոյանի հեղինակած “The Morphology of Songs” ուսումնական ձեռնարկը տպագրության:
- Երաշխավորել Ա.Կնյազյանի «Լեզվական և հանրամշակութային գենդերային դրսևորումները անգլիական երգիծական խոսույթում» մենագրությունը տպագրության:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

28.10.2021թ